<<Հայոց եկեղեցու պատմություն>>

10-րդ դասարան

№ 1-8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հիսուս Քրիստոսի առաքյալներից ո՞վքեր ականատես եղան նրա պայծառակերպությանը. *(0.5 միավոր)*

1) Թադեոսը, Պետրոսը, Հովհաննեսը
2) Հովհաննեսը, Հակոբոսը, Պետրոսը
3) Բարդուղեմեոսը, Հակոբոսը, Պետրոսը
4) Հակոբոսը, Հովհաննեսը, Բարդուղիմեոսը

2. Ինչպե՞ս է Եզեկիել մարգարեն անվանում Հայաստանը. *(0.5 միավոր)*

1) Թորգոմի տուն
2) Արարատի թագավորություն
3) Ասքանազյան թագավորություն
4) Տուն Հայոց

3. Ի՞նչ է տեղադրված հայկական եկեղեցիներում՝ խորանի կենտրոնում. *(0.5 միավոր)*

1) մկրտության ավազանը
2) պատարագի Սուրբ Սեղանը
3) գավիթը
4) ավանդատունը

4. Գրկելով մանուկ Հիսուսին ի՞նչ ասաց Սիմեոն ծերունին.

1) որ նա կդառնա Երուսաղեմի արքա
2) որ նա կփրկի իսրայելացիներին
3) որ նա կդառնա մեծագույն մարգարե
4) որ նա փրկություն և լույս կլինի մարդկանց համար

5. Ե՞րբ է տեղի ունեցել Վաղարշապատի Մայր տաճարի նավակատիքը.

(0.5 միավոր)

1) 301թ. հունվարի 6-ին
2) 302թ. սեպտեմբերի 14-ին
3) 303թ. ապրիլի 7-ին
4) 303թ. օգոստոսի 15-ին

6. Ի՞նչ էր քարոզում Արիոսը. *(0.5 միավոր)*

1) մերժում էր Քրիստոսի աստվածային էությունը
2) քարոզում էր, որ Մարիամից ծնվել է Հիսուս մարդը և հետո միայն՝ մկրտության ժամանակ, աստվածային էությունը Սուրբ Հոգու միջոցով իջել է Քրիստոսի վրա
3) քարոզում էր, որ Սուրբ Հոգին Աստված չէ
4) քարոզում էր, որ Հիսուս Քրիստոսի մեջ աստվածային և մարդկային բնությունները խառնված ու շփոթված են, և մարդկային բնությունը տարրալուծված է աստվածային բնության մեջ

7. Ալեքսանդր I ցարը Հայոց ո՞ր կաթողիկոսին նվիրեց վեղարի ադամանդակուռ խաչ. *(0.5 միավոր)*

1) Դանիել Ա Սուրմառեցուն
2) Հովհաննես Ը Կարբեցուն
3) Եփրեմ Ա Ձորագեղցուն
4) Ներսես Ե Աշտարակեցուն

8. Ո՞վ է. «Ես գիտեմ, որ ոչինչ չգիտեմ» արտահայտության հեղինակը.

(0.5 միավոր)

1) Պլատոն
2) Արիստոտել
3) Սոկրատես
4) Դավիթ Անհաղթ

№ 9-12
Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Արարատյան հայրապետական թեմի առաջնորդանիստը Երևանի ---------- եկեղեցին է:

(1 միավոր)

10. 1066թ. Ծամնդավում գումարված ժողովի ժամանակ կաթողիկոս ընտրվեց ----------, որի գահակալությամբ Հայոց եկեղեցու պատմության մեջ սկսվեց Պահլավունի տոհմի գահակալության շուրջ 140-ամյա շրջանը: *(1 միավոր)*

11. ---------- եկեղեցում գործածվող գրքերից է, որում նշվում են տարվա ընթացքում եկեղեցական տոների օրերը և կատարման կարգը: *(1 միավոր)*

12. Քրիստոնեական բարոյագիտության մեջ յոթ մահացու մեղքերից մեծագույնը համարվում է ----------ը:

(1 միավոր)

№ 13-14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝

յուրաքանչյուրը 4 փաստից

13. Հայոց եկեղեցում օգտագործվող իրերի անունները համապատասխանեցնել իրենց նկարագրությանը. *(1 միավոր)*

1. կանթեղ
2. խաչվառ
3. մաղզմա
4. սկիհ

ա. Խնկարկության համար գործածվող կրակի փոքր աման:
բ. Հարթ պնակ, որի մեջ ամփոփում են սուրբ հաղորդության նշխարը և դնում սկիհի վրա:
գ. Արծաթյա՝ ներսից ոսկեզօծ ոտքով կամ պատվանդանով գինու բաժակ, որն օգտագործվում է պատարագի ընթացքում:
դ. Թափորի առջևից տանելու համար երկար ձողի վրա ամրացված մետաղյա կամ փայտյա խաչ, որի վրա ամրացված դրոշը երկու կողմերից կրում է Քրիստոսի, Աստվածամոր և սրբերի ասեղնագործ պատկերներ:
ե. Սուրբ Սեղանի և սրբապատկերների առջև շղթաներից կախվող ճրագակալ:

1	
2	
3	
4	

14. Եկեղեցու Սրբազան ավանդության, որմնանկարչության, մանրանկարչության և քանդակագործության մեջ տարածված ավետարանիչների խորհրդանշանները համապատասխանեցնել Ավետարանիչների անուններին.

(1 միավոր)

1. Մարկոս
2. Հովհաննես
3. Ղուկաս
4. Մատթեոս

ա) մարդ
բ) օձ
գ) եզ
դ) առյուծ
ե) արծիվ

1	
2	
3	
4	

№ 15-16

Ժամանակագրական հաջորդականության իմացություն պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 5 փաստից

15. Գևորգ Ե կաթողիկոսի գահակալման տարիներին տեղի ունեցած իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.

ա) Խորեն արքեպ. Մուրադբեկյանը հայտարարվեց կաթողիկոսական տեղապահ:
բ) Ստեղծվեց Եղբայրական օգնության Էջմիածնի կոմիտեն:
գ) Պողոս Նուբարը լիազորվեց մեծ տերություններին ներկայացնելու հայկական բարենորոգումների հարցը:
դ) Հայոց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների իրավական կարգավորման նպատակով կազմվեց ժամանակավոր «դաշնագիր»:
ե) Էջմիածնում հրավիրվեց հայ գաղթականության հարցերին նվիրված համագումար:

1	
2	
3	
4	
5	

16. Տրված տոները դասավորել ըստ տարվա ընթացքում նրանց տոնման հաջորդականության: *(1 միավոր)*

ա. Վարագա Սուրբ Խաչի
բ. Սրբոց Ղևոնդյանց
գ. Բուն Բարեկենդան
դ. Պայծառակերպություն
ե. Սրբոց Վարդանանց տոն

1	
2	
3	
4	
5	

№ 17

Աշխատանք սկզբնաղբյուրով՝ կազմված 2 հարցից

17. «Այսօր մեր գոյամարտը, անկախ մեր ցանկությունից, որքան էլ երկար տևի, ոչ մի դեպքում ընկրկում, նահանջ, թուլացում մենք մեզ չենք կարող թույլատրել: Դա դավաճանություն է Աստծուն, դավաճանություն է հայրենիքին»:

1. Ո՞վ է այս խոսքերի հեղինակը:

---

2. Ե՞րբ է արվել այս հայտարարությունը:

№ 18-19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 2 ճիշտ պատասխանով

18. Նշել երկու ճիշտ պատասխան. *(0.5 X 2 = 1 միավոր)*

Տրված պայմաններից ընտրել երկուսը, որոնք համաձայն եկեղեցու կողմից հաստատված կանոնների կարող էին ամուսնալուծության պատճառ հանդիսանալ.

1) Ունեցվածքի բացակայությունը
2) Անզավակությունը

3) Ամուսիններից որևէ մեկի հիվանդանալը
4) Ամուսիններից որևէ մեկի յոթ և ավելի տարի անլուր բացակայությունը
5) Ամուսիններից որևէ մեկի մինչև ամուսնությունը թաքցրած անբուժելի խելագարությունը կամ դիվահարությունը

19. Նշել երկու ճիշտ պատասխան. *(0.5 X 2 = 1 միավոր)*

Ստորև թվարկված դրույթներից ո՞ր երկուսն են տեղ գտել 1920 թվականի փետրվարին կազմված ժամանակավոր «դաշնագրում»:

1) Հայոց եկեղեցուն էր վերապահվում ՀՀ-ում արդարադատություն իրականացնելու իրավունքը:
2) Հայոց եկեղեցին կարող է նվիրակներ ունենալ օտար պետություններում և եկեղեցիներում ու նրանցից փոխադարձաբար ընդունել նվիրակներ:
3) Մայր Աթոռի լիազորները, թեմական առաջնորդները և Ազգային եկեղեցական ժողովի պատգամավորները պետք է աշխատավարձ ստանային պետական բյուջեից:
4) Մայր Աթոռի լիազորները, Սինոդի անդամները, թեմական առաջնորդները և Ազգային եկեղեցական ժողովի պատգամավորները պետք է օգտվեին անձի անձեռնմխելիության իրավունքից:
5) Հայաստանի խորհրդարանի ընդունած օրինագծերը պետք է վավերացվեին Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից:
6) Հայոց կաթողիկոսին պետք է ընտրեր Ազգային-եկեղեցական ժողովը, իսկ ընտրությունը պետք է վավերացներ ՀՀ կառավարությունը:

№ 20

Խնդիր-առաջադրանք (2 միավոր)

20. Դեռևս XX դարի 80-ական թթ. վերջին և 90-ական թվականներին Հայաստանի Հանրապետություն մուտք գործեցին տարաբնույթ կրոնական հոսանքներ, տոտալիտար աղանդավորական շարժումներ, որոնց ներկայացուցիչները միսիոներական ակտիվ գործունեություն սկսեցին ծավալել: Նորամուտ կրոնական կազմակերպություններից մի քանիսը կարողացան հայ հասարակության մեջ ձեռք բերել որոշ կողմնակիցներ, հետևորդներ և կազմավորել համայնքներ:

Հարց:

1. **Որո՞նք էին այն նպաստավոր պայմանները, որոնք հող հանդիսացան աղանդավորական շարժումների՝ Հայաստան ներթափանցման համար:**
2. **Ձեր կարծիքով հասարակության ո՞ր խավերն անդամագրվեցին այդ կազմակերպություններին և ինչո՞ւ:**
3. **Ձեր կարծիքով ի՞նչ քայլեր են անհրաժեշտ նրանց Մայր եկեղեցու գիրկը վերադարձնելու համար:**

№ 21

Շարադրանք (2 միավոր)

21. Ի՞նչ նպատակներ էր հետապնդում 1903 թ. հունիսի 12-ի օրենքը և արդյոք միայն եկեղեցո՞ւ դեմ էր ուղղված: Ներկայացրե՛ք Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա Խրիմյանի՝ այդ օրենքի իրականացման դեմ կատարած ձեռնարկումները: Գնահատե՛ք 1903 թ. հունիսի 2-ի օրենքի դեմ սկսված շարժման նշանակությունը: